Social Security

Նպաստների Ընկալում

2012թ.

www.socialsecurity.gov

Կապվեք Սոցիալական Ապահովության վարչության հետ

Այցելեցեք Մեր Կայքէջը

Մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** պարունակում է Սոցիալական Ապահովության ծրագիրների լրիւ տեղեկությունները: Այս կայքէջում նաեւ կարող եք՝

- դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստներ ստանալու համար,
- Գտնել ձեր տեղական Սոցիալական Ապահովության Գրասենեակի հասցէն.
- ծանոթանալ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության անձնական հաշվետվությանը*),
- պահանջել Medicare-ի նոր քարտ և
- Գտնել մեր հրատարակությունների օրինակները.

Այս ծառայություններից մի քանիսը հասանելի են միայն անգլերեն լեզվով:

Զանգահարեք մեր անվճար հեռախոսահամարով

Բացի մեր կայքից օգտվելուց կարող եք նաև զանգահարել մեզ անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Որպես կանոն, զանգահարողներն ավելի կարճ են սպասում, եթե զանգահարում են շաբաթվա մեջ երեքշաբթիին հաջորդող օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ: Եթե Դուք խուլ եք կամ թույլ լսողություն ունեք, ապա կարող եք զանգահարել մեր հեռատիպի (TTY) համարով՝ **1-800-325-0778**:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Բովանդակություն

Սոցիալական ապահովություն. պարզ կոնցեպտ 4

Ինչ պետք է գիտ ենաք Սոցիալական ապահովության մասին, քանի դեռ աշխատում եք 7

Ինչ պետք է գիտենաք արտոնությունների մասին 9

Ձեր ընտանիքի արտոնությունները 14

Երբ պատրաստ լինեք դիմել արտոնությունների 17

Լրացուցիչ ապահովության եկամուտը (SSI) ծրագիր 19

Բողոքարկման իրավունքը 20

Medicare 20

Որոշ փաստեր Սոցիալական ապահովության վերաբերյալ 24

Սոցիալական ապահովություն. պարզ կոնցեպտ

Սոցիալական ապահովությունը վերաբերում է գրեթե յուրաքանչյուր ընտանիքի, և ինչ-որ պահի ազդեցություն է ունենում գրեթե բոլոր ամերիկացիների կյանքում:

Սոցիալական ապահովությունն օգնում է ոչ միայն տարեց ամերիկացիներին, այլև հաշմանդամ դարձած աշխատողներին ու ամուսին կամ ծնող կորցրած ընտանիքներին: Այսօր մոտ 159 միլիոն մարդ աշխատում և Սոցիալական ապահովության հարկ է վճարում, իսկ 55 միլիոն մարդ ստանում է Սոցիալական ապահովության ամսական արտոնություն:

Մեր արտոնակիրների մեծ մասը թոշակառուներ են ու նրանց ընտանիքները՝ մոտ 38 միլիոն մարդ:

Սակայն, Սոցիալական ապահովության նպատակը երբեք չի եղել՝ լինել թոշակառուի միակ եկամտի աղբյուրը: Երբ միջին աշխատավարձ ունեցող անձն անցնում է թոշակի, Սոցիալական ապահովությունը փոխարինում է նրա եկամտի մոտ 40%-ը, և ֆինանսական խորհրդատուների մեծամասնությունը կարծում է, որ հարմարավետ կյանք վարելու համար թոշակառուն պետք է ունենա իր նախկին՝ մինչև թոշակի անցնելն ունեցած եկամտի առնվազն 70%-ը: Իբրև թոշակառու հարմարավետ կյանք վարելու համար ամերիկացիներն ավելի շատ կարիքներ ունեն, քան զուտ Սոցիալական ապահովությունը: Նրանք նաև ունեն մասնավոր թոշակների, խնայողությունների ու ներդրումների կարիք:

Սոցիալական ապահովության գործակալությունը ցանկանում է, որ Դուք հասկանաք, թե ինչ նշանակություն կարող է Սոցիալական ապահովությունն ունենալ Ձեր և Ձեր ընտանիքի ֆինանսական ապագայում: «*Նպատակների Ընկալում*» խորագրով այս հրապարակումը բացատրում է Սոցիալական ապահովության թոշակավորման, հաշմանդամության և ժառանգների ապահովագրության ծրագրերի հիմնադրույթները:

Սոցիալական ապահովության ներկայիս համակարգը հետևյալ կերպ է գործում. աշխատանքային կյանքի ընթացքում Դուք հարկեր եք վճարում Սոցիալական ապահովությանը: Հարկային այս եկամուտն օգտագործվում է՝ վճարելու այն անձանց արտոնությունները, որոնք.

- արդեն թոշակառու են;
- հաշմանդամ են;
- մահացած աշխատողի ժառանգ են; և
- արտոնակրի խնամքին են:

Գումարը, որը մուծում եք իբրև հարկ, չի պահվում որևէ այնպիսի անձնական հաշվում, որը կարելի կլինի օգտագործել արտոնությունից օգտվելու նպատակով: Ձեր հարկերն այս պահին օգտագործվում են՝ վճարելու նրանց, ովքեր այս պահին են արտոնություն ստանում: Գումարի չօգտագործված մասը փոխանցվում է ոչ թե Ձեր անունը կրող որևէ մասնավոր հաշվի, այլ Սոցիալական ապահովության թրասթային (վստահված) հիմնադրամ:

Սոցիալական ապահովությունն ավելին է, քան սոսկ թոշակառությունը

Շատերը կարծում են, թե Սոցիալական ապահովությունը պարզապես թոշակառության ծրագիր է: Թեև ճիշտ է, որ Սոցիալական ապահովություն ստացողների մեծամասնությունը թոշակառուներ են, սակայն Սոցիալական ապահովություն ստանում են նաև.

- հաշմանդամները;
- Սոցիալական ապահովություն ստացողի ամուսինը/կինը կամ երեխան;
- մահացած աշխատողի ամուսինը/կինը կամ երեխան; կամ
- մահացած աշխատողի խնամքին եղած ծնողը:

Ըստ Ձեր հանգամանքների, Սոցիալական ապահովության իրավունակություն Դուք կարող եք ձեռքբերել ցանկացած տարիքում: Իրականում, Սոցիալական ապահովությունը երեխաներին ավելի շատ արտոնություններ է վճարում, քան պետական որևէ այլ ծրագիր:

Ձեր Սոցիալական ապահովության հարկերը

Սոցիալական ապահովության հարկերը, որ Դուք, մյուս աշխատողների հետ մեկտեղ, վճարում եք համակարգին, օգտագործվում են Սոցիալական ապահովության արտոնությունների վճարման նպատակով:

Սոցիալական ապահովության հարկերը Դուք վճարում եք եկամտի մինչև որոշակի մակարդակ հասնող գումարի հաշվով: 2012 թ. համար այդ գումարը $110,100 է:

Medicare-ի հարկեր

Medicare-ի հարկերը Դուք վճարում եք Ձեր աշխատավարձի, կամ անհատական աշխատանքային գործունեության արդյունքում վաստակած եկամտի ողջ ծավալի հաշվով: Այդ հարկերն օգտագործվում են Medicare-ի տրամադրման նպատակով:

Եթե մեկ այլ կողմի մոտ եք աշխատում	2012 թ. Սոցիալական ապահովության հարկ	Medicare-ի հարկ
Դուք վճարում եք	4.2%	1.45%
Ձեր աշխատատուն վճարում է	6.2%	1.45%
Եթե անհատական աշխատանքային գործունեությամբ եք զբաղված		
Դուք վճարում եք	10.4%	2.9%

Ո՞ւր են գնում Ձեր Սոցիալական ապահովության հարկային դոլլարները

Երբ աշխատում եք, Ձեր Սոցիալական ապահովության հարկերի հուրաքանչյուր դոլլարի 85 սենթը գնում է թրասթային հիմնադրամ, որից վճարվում են ներկա թոշակառուների ու նրանց ընտանիքների, ինչպես նաև մահացած աշխատողների ժառանգորդ ամուսինների/կանանց ու երեկաների ամսական արտոնությունները: Մնացած 15 սենթը գնում է թրասթային հիմնադրամ, որից վճարվում են հաշմանդամների ու նրանց ընտանիքների արտոնությունները:

Այս թրասթային հիմնադրամներից Սոցիալական ապահովությունը նաև վճարում է Սոցիալական ապահովության ծրագրերի կառավարման ծախսերը: Սոցիալական ապահովության գործակալությունը դաշնային կառավարության ամենաարդյունավետ գործակալություններից մեկն է, և մենք ամեն օր ձգտում ենք այն ավելի լավը դարձնել: Ձեր վճարած Սոցիալական ապահովության հարկերի յուրաքանչյուր դոլլարից մենք ծրագրի կառավարման նպատակով ծախսում ենք ավելի պակաս, քան մեկ սենթ:

Medicare-ի հարկերի՝ Ձեր վճարած ողջ գումարը գնում է թրաստթային հիմնադրամ, որից վճարվում է Medicare-ի բոլոր արտոնակիրների հոսպիտալային և դրան առնչվող խնամքի ծախսերի որոշ մասը: Medicare-ը կառավարվում է ոչ թե Սոցիալական ապահովության, այլ Medicare-ի և Medicaid-ի ծառայությունների կենտրոնների (Centers for Medicare & Medicaid Services) կողմից:

Ինչ պետք է գիտ ենաք Սոցիալական ապահովության մասին, քանի դեռ աշխատում եք

Ձեր Սոցիալական ապահովության համարը

Ձեր Սոցիալական ապահովության համար Ձեր կապն է Սոցիալական ապահովության հետ: Դրա կարիքը Դուք ունենում եք աշխատանք ստանալիս ու հարկեր վճարելիս: Երբ աշխատում եք, մենք օգտագործում ենք Ձեր Սոցիալական ապահովության համարը, որպեսզի հետևենք Ձեր եկամուտներին, իսկ երբ Սոցիալական ապահովություն եք ստանում՝ Ձեր արտոնություններին:

Ձեր Սոցիալական ապահովության քարտը Ձեզ վրա մի կրեք: Ուշադիր եղեք, որպեսզի ձեր Սոցիալական ապահովության համարը չտաք մեկ այլ անձի: Ինքնության գողությունն այսօր ամենաարագ աճող հանցագործություններից է: Ինքնության գողերը հիմնականում օգտագործում են Ձեր Սոցիալական ապահովության համարն ու բարի վարկային ցուցանիշը՝ Ձեր անունից ավելի մեծ վարկերի դիմելու համար: Նրանք այդուհետ օգտագործում են վարկային քարտերը՝ իրենց համար իրեր գնելու նպատակով, սակայն հաշիվները չեն վճարում:

Ձեր Սոցիալական ապահովության համարն ու մեր գրառումները կոնֆիդենցիալ են: Եթե մեկ այլ ոք մեզնից տեղեկատվություն խնդրի Ձեր մասին, ապա մենք որևէ տեղեկատվություն չենք տրամադրի առանց Ձեր գրավոր համաձայնության, բացառությամբ օրենքով թույլատրված դեպքերի:

Կապվեք մեզ հետ, եթե Սոցիալական ապահովության համար ստանալու կարիք ունեք, եթե կորցրել եք Ձեր քարտն ու նորի կարիքն ունեք, կամ եթե կարիք ունեք փոխել Ձեր ներկա քարտի վրա նշված անունը: Ձեզ կխնդրվի լրացնել պարզ մեկ էջանոց մի ձև, և ներկայացնել որոշ փաստաթղթեր: Մենք պետք է տեսնենք

բնօրինակները, կամ դրանք տրամադրող գրասենյակի կողմից վավերացված պատճենները: Լուսապատճեն, կամ փաստաթղթի նոտարացված պատճեն ընդունել մենք չենք կարող:

Սոցիալական ապահովության համար ստանալու, կամ քարտը փոխանակելու համար Դուք պետք է ապացուցեք Ձեր ԱՄՆ քաղաքացիությունը կամ ներգաղթային կարգավիճակը, տարիքն ու ինքնությունը: Քարտի փոխանակման համար ԱՄՆ քաղաքացիությունն ու տարիքն ապացուցելը պարտադիր չէ, եթե այդ տվյալները մեր տրամադրության տակ արդեն կան: Միայն որոշակի փաստաթղթեր կան, որ մենք կարող ենք ընդունել իբրև ԱՄՆ քաղաքացիության ապացույց: Դրանք ներառում են

Ձեր ԱՄՆ ծննդյան վկայականը, ԱՄՆ անձնագիրը, Բնականացման (Naturalization) վավերագիրը կամ Քաղաքացիության վավերագիրը: Եթե Դուք ԱՄՆ քաղաքացի չեք, ապա Ձեր ներգաղթային կարգավիճակն ապացուցելու համար կիրառվում է մեկ այլ կարգ:

Ինքության ապացույցի ընդունելի տարբերակները ներառում են այն ոչ-ժամկետանց փաստաթղթերը, որտեղ նշված են Ձեր անունը, ինքնությունը մատնանշող տեղեկություններ և, գերադասելի է՝ թարմ լուսանկար, օրինակ՝ վարորդական վկայական, նահանգի կողմից տրված անձի ինքությունը հաստատող ոչ-վարորդական քարտ, կամ ԱՄՆ անձնագիր:

Ձեր Սոցիալական ապահովության քարտում նշված անվան փոփոխության համար դիմելիս պետք է ներկայացնել վերջերս տրված փաստաթուղթ, որն ապացուցում է, որ Ձեր անունն իրավաբանորեն փոխվել է:

Ձեր Սոցիալական ապահովության քարտին վերաբերվեք խնամքով և ուշադրությամբ: Քարտի փոխանակում կարելի է իրականացնել տարին միայն երեք անգամ, սակայն ոչ ավելի քան 10 անգամ՝ Ձեր կյանքի ողջ ընթացքում: Անվան իրավաբանական փոփոխություններն ու այլ բացառություններն այս սահմանափակումներում հաշվի չեն առնվում: Օրինակ, քաղաքացի չհանդիսացող անձի կարգավիճակի փոփոխությունները, որոնք քարտի տվյալների փոփոխություն են պահանջում, այս սահմանափակումների նպատակով կարող են հաշվի չառնվել: Այս սահմանափակումները կարող են չկիրառվել, եթե Դուք կարողանաք ապացուցել, որ քարտն անհրաժեշտ է Ձեզ զգալի դժվարությունից խուսափելու համար:

Հավելյալ տեղեկությունների համար ծանոթացեք *«Ձեր Սոցիալական Ապահովության Համարն Ու Քարտը»*, Հրապարակում հ. 05-10002-AM: Եթե քաղաքացի չեք, ապա կարող եք նաև ծանոթանալ *«Սոցիալական Ապահովության Համարներ Ոչ Քաղաքացիների Համար»*, Հրապարակում հ. 05-10096-AM):

Քարտի հետ կապված մեր բոլոր ծառայություններն անվճար են: Սոցիալական ապահովությունը երբեք վճար չի գանձում քարտի հետ կապված որևէ ծառայության համար:

Ինչպես ձեռքբերել Սոցիալական ապահովության իրավունակություն

Աշխատելով ու հարկեր վճարելով Դուք Սոցիալական ապահովության «կրեդիտներ» եք վաստակում: 2012-ին, աշխատած յուրաքանչյուր $1,130-ի դիմաց Դուք վաստակում եք մեկ կրեդիտ՝ մինչև տարեկան առավելագույնը չորս կրեդիտ: (Յուրաքանչյուր տարի, մեկ կրեդիտ վաստակելու համար անհրաժեշտ եկամտի գումարի չափը սովորաբար աճում է):

Մարդկանց մեծ մասն արտոնությունների իրավունակություն ձեռքբերելու համար 40 կրեդիտի կարիք ունի (10 տարվա աշխատանքային գործունեություն): Ավելի երիտասարդները, որպեսզի ձեռքբերեն հաշմանդամության արտոնությունների, կամ աշխատողի մահվան դեպքում ընտանիքի անդամների համար նախատեսված ժառանգորդի արտոնությունների իրավունակություն, ավելի պակաս կրեդիտի կարիք ունեն:

Ինչ պետք է գիտենաք արտոնությունների մասին

Թոշակառության, հաշմանդամության կամ մահվան դեպքում Սոցիալական ապահովության արտոնությունները փոխարինում են Ձեր եկամտի որոշ մասին: Ձեր արտոնավճարի չափը պայմանավորված է ողջ աշխատանքային գործունեության ընթացքում Ձեր վաստակած գումարից: Որքան ավելի մեծ է կյանքի ընթացքում վաստակած գումարը, այնքան ավելի բարձր են արտոնությունները: Եթե եղել են տարիներ, որոնց ընթացքում Դուք չեք աշխատել, կամ նվազ եկամուտ եք ունեցել, Ձեր արտոնագումարը կարող է ավելի պակաս լինել, քան եթե ավելի կայուն աշխատանքային գործունեություն ունեցած լինեիք:

Կենսաթոշակային արտոնությունները

Ընտրելը՝ երբ անցնել կենսաթոշակի, կյանքում Ձեր կայացնելիք ամենակարևոր որոշումներից է: Եթե որոշեք կենսաթոշակի անցնել Ձեր կենսաթոշակային լիարժեք տարիքին հասնելուն պես, ապա կստանաք Ձեր արտոնությունների լիարժեք ծավալը: Սակայն եթե կենսաթոշակի անցնեք նախքան կենսաթոշակային տարիքը, ապա կրճատված արտոնություններ կստանաք: Հետևյալ աղյուսակում ներկայացվում է Ձեր կենսաթոշակային լիարժեք տարիքը՝ ըստ ծննդյան թվի:

Կենսաթոշակային լիարժեք տարիքը

Եթե ծնվել եք 1943-ց 1960-ն ընկած ժամանակահատվածում, ապա կենսաթոշակային լիարժեք արտոնությունների վճարման վերահաս տարիքն աստիճանաբար աճում է մինչև 67 տարեկանի:, Եթե ծնվել եք 1945-ին կամ ավելի վաղ, ապա Դուք արդեն Սոցիալական ապահովության լիարժեք արտոնությունների իրավունակություն ունեք: Հետևյալ աղյուսակը կօգնի Ձեզ պարզել Ձեր կենսաթոշակային լիարժեք տարիքը:

Ծննդյան թիվը	Կենսաթոշակային լիարժեք տարիքը
1943-1954	66
1955	66 և 2 ամիս
1956	66 և 4 ամիս
1957	66 և 6 ամիս
1958	66 և 8 ամիս
1959	66 և 10 ամիս
1960 կամ ավելի ուշ	67

Ծանոթություն. *Թեև կենսաթոշակային լիարժեք տարիքն աճում է, սակայն Medicare-ի արտոնությունների համար Դուք պետք է դիմեք Ձեր 65-ամյակից երեք ամիս առաջ: Եթե ավելի երկար հապաղեք, ապա Ձեր Medicare-ի բժշկական ապահովագրությունը (Part B) և դեղատոմսով բացթողնվող դեղորայքի ծածկույթը (Part D) կարող են Ձեզ համար ավելի ծախսատար լինել:*

Հետաձգված կենսաթոշակառություն

Եթե որոշեք կենսաթոշակային արտոնությունների ստացումը հետաձգել կենսաթոշակային լիարժեք տարիքից անդին, ապա Ձեր արտոնությունները կաճեն որոշակի տոկոսով, ըստ ծննդյան թվի: Աճն ավտոմատ կերպով կավելացվի յուրաքանչյուր ամիս, կենսաթոշակային լիարժեք տարիքին հասնելու պահից մինչև այն պահը, երբ կամ կսկսեք արտոնություններ ստանալ, կամ դառնաք 70 տարեկան (որ պահն առաջինը վրա հասնի): Աճի տոկոսը պայմանավորված է Ձեր ծննդյան վականով: Հետաձգված կենսաթոշակային կրեդիտների մասին հավելյալ տեղեկատվության համար այցելեք ***www.socialsecurity.gov/retire2/delayret.htm***.

Վաղ կենսաթոշակառություն

Արտոնություններ ստանալ Դուք կարող եք սկսել 62 տարեկան դառնալուն պես: Այնուամենայնիվ, եթե սկսեք Ձեր արտոնությունները ստանալ վաղ, ապա դրանք կկրճատվեն: Եթե Սոցիալական ապահովությունը սկսեք կենսաթոշակային լիարժեք տարիքին չհասած, ապա մինչ դրա լրանալը մնացած յուրաքանչյուր ամսվա համար Ձեր արտոնությունը կկրճատվի 1 տոկոսի կեսի չափով: Օրինակ, եթե Ձեր կենսաթոշակային լիարժեք տարիքը 66 է, և Դուք Սոցիալական ապահովություն սկսում եք ստանալ 62-ից, ապա Ձեզ կհասնի արտոնությունների լիարժեք ծավալի միայն 75 տոկոսը:

Ծանոթություն. *Կենսաթոշակային լիարժեք տարիքի աճին կուգընթաց, հետագա տարիներին կաճի նաև կրճատման ծավալը:*

Եթե Դուք աշխատում և արտոնություններ եք ստանում

Դուք կարող եք շարունակել աշխատել և միաժամանակ ստանալ կենսաթոշակային արտոնություններ: Կենսաթոշակային լիարժեք տարիքի հասնելու ամսին (կամ այդուհետ) Ձեր վաստակած եկամուտը չի բերի Սոցիալական ապահովության արտոնությունների կրճատման: Այսուհանդերձ, Ձեր արտոնությունները կկրճատվեն, եթե մինչև կենսաթոշակային լիարժեք տարիքի լրանալը մնացած ամիսներին Ձեր եկամուտը գերազանցի որոշակի սահմանագիծը:

Եթե աշխատում եք, սակայն միաժամանակ սկսում եք նաև արտոնություններ ստանալ նախքան կենսաթոշակային լիարժեք տարիքի հասնելը, ապա տարեկան սահմանագծից վեր Ձեր աշխատած յուրաքանչյուր $2-ի դիմաց Ձեր արտոնությունները $1-ով կկրճատվեն: 2012-ին այդ շեմը կազմում է $14,640:

Ձեր կենսաթոշակային լիարժեք տարիքը լրանալու տարում, Ձեր արտոնությունները, տարեկան մեկ այլ շեմից բարձր (2012-ին՝ $38,880) աշխատած յուրաքանչյուր $3-ի համար կկրճատվեն $1-ով՝ մինչև կենսաթոշակային լիարժեք տարիքը լրանալու ամիսը:

Կենսաթոշակային լիարժեք տարիքի հասնելուն պես, Դուք կարող եք շարունակել աշխատել, և Ձեր Սոցիալական ապահովության արտոնությունը չի կրճատվի՝ անկախ Ձեր վաստակած գումարից:

Հավելյալ տեղեկությունների համար այն մասին, թե աշխատելն ինչպես է անդրադառնում աշխատանքի վրա, տեսեք «*Ինչպես Աշխատանքը Ազդում Է Ձեր Նպաստներին*», Հրապարակում հ. 05-10069-AM):

Ծանոթություն. *Այն անձանց պարագայում, ովքեր և՛ աշխատում, և՛ հաշմանդամության կամ Լրացուցիչ ապահովության եկամուտը վճարումներ են ստանում, գործում է եկամուտներին վերաբերող մեկ այլ կարգ: Նրանք պետք է անհապաղ Սոցիալական ապահովությանը ներկայացնեն իրենց ողջ եկամտի մասին անկախ նրանից, թե որքան են վաստակում:*

Այրիների և ամուրիների կենսաթոշակային արտոնությունները

Եթե Դուք այրու կամ ամուրիի արտոնություններ եք ստանում, ապա կարող եք Ձեր անմիջական կենսաթոշակային արտոնություններին անցնել արդեն իսկ 62 տարեկանից՝ պայմանով, որ Ձեր կենսաթոշակային արտոնության չափն ավելի մեծ է, քան այն գումարը, որը ստանում եք Ձեր մահացած ամուսնու/կնոջ վաստակած եկամտից: Շատ դեպքերում, Դուք կարող եք սկսել կրճատված չափով ստանալ արտոնություններից մեկը, և ապա անցնել մյուս արտոնությանը՝ լիարժեք չափով, կենսաթոշակային լիարժեք տարիքին հասնելուն պես: Այս կարգը բարդ է, և դրա կանոնները տարբեր՝ պայմանավորված Ձեր իրավիճակով, այնպես որ՝ Ձեզ մատչելի տարբերակների մասին խոսեք Սոցիալական ապահովության ներկայացուցչի հետ:

Կենսաթոշակային արտոնությունների մասին հավելյալ տեղեկատվության համար տեսեք «*Ծերության Նպաստներ*», Հրապարակում հ. 05-10035-AM:

Հաշմանդամության արտոնություններ

Եթե չեք կարող աշխատել ֆիզիկական կամ մտավոր վիճակի բերումով, որն ակնկալվում է, որ կշարունակվի առնվազն մեկ տարի, կամ կբերի մահվան, ապա հնարավոր է, որ ունենաք Սոցիալական ապահովության հաշմանդամության արտոնությունների իրավունակություն:

Հաշմանդամության՝ մեզ մոտ կիրառվող կարգը տարբեր է մասնավոր պլանների կամ այլ պետական գործակալությունների կողմից կիրառվող կարգերից: Փաստը, որ Դուք բավարարում եք մեկ այլ գործակալության կամ ծրագրի կողմից սահմանված հաշմանդամության պայմանները, չի նշանակում, թե Դուք կբավարարեք նաև հաշմանդամության մեր պայմանները: Եվ բժշկի հայտարարություն ունենալն առ այն, որ Դուք հաշմանդամ եք, չի նշանակում, որ Դուք ավտոմատ կերպով կունենաք Սոցիալական ապահովության հաշմանդամության արտոնությունների իրավունակություն: Սոցիալական ապահովության հաշմանդամության արտոնությունների մասին հավելյալ տեղեկությունների համար տեսեք «*Հաշմանդամության Նպաստներ*», Հրապարակում հ. 05-10029-AM: Սոցիալական ապահովության հաշմանդամության արտոնությունների համար կարող եք դիմել մեր կայքէջից՝ ***www.socialsecurity.gov/applyfordisability***:

Հաշմանդամություն ունեցող անձինք, ներառյալ երեխաները, որոնք նվազ եկամուտ ու փոքրաթիվ ռեսուրսներ ունեն, կարող են նաև ունենալ Լրացուցիչ ապահովության եկամուտը (Supplemental Security Income, SSI) ծրագրի միջոցով հաշմանդամության վճարումների իրավունակություն: SSI-ի մասին հավելյալ տեղեկությունների համար տեսեք «*Լրացուցիչ Ապահովության Եկամուտը (SSI)*», Հրապարակում հ. 05-11000-AM):

Հաշմանդամ դառնալու դեպքում պետք է հնարավորինս արագ դիմեք հաշմանդամության արտոնությունների համար, քանի որ սովորաբար հաշմանդամության հարցի վարույթը մի քանի ամիս է տևում: Հնարավոր է, որ մենք կարողանանք Ձեր հայցին ավելի արագ ընթացք տալ, եթե դիմելիս Դուք ձեռքի տակ ունենաք հետևյալը.

- Ձեր բժիշկների, թերապևտների, հոսպիտալների, կլինիկաների և գործավարների կողմից տրված բժշկական փաստաթղթերն ու բուժման ամսաթվերը;
- Ձեր լաբորատոր և այլ թեսթերի արդյունքները;
- Ձեր բժիշկների, կլինիկաների ու հոսպիտալների անունները, հասցեները, հեռախոսի ու ֆաքսի համարները;
- այն բոլոր դեղերի անունները, որոնք ընդունում եք; և
- վերջին 15 տարում Ձեր աշխատատուների անուններն ու աշխատանքային պարտականությունների նկարագրությունը:

Ձեր արտոնությունները կարող են հարկվել

Ոմանք, ովքեր Սոցիալական ապահովություն են ստանում, ստիպված են իրենց արտոնություններից հարկեր վճարել: Մեր ներկա արտոնակիրների մեկ երրորդից ավելի քիչն է իր արտոնություններից հարկ վճարում:

Ձեր արտոնություններից Դուք պետք է հարկ վճարեք, եթե դաշնային հարկային հայտարարագիր եք ներկայացնում իբրև «անհատ», և Ձեր ընդհանուր եկամուտը գերազանցում է $25,000-ը: Եթե ներակայացնում եք համատեղ հայտարարագիր, ապա պետք է հարկ վճարեք, եթե Ձեր ու Ձեր ամուսնու/կնոջ ընդհանուր եկամուտը գերազանցում է $32,000-ը: Հավելյալ տեղեկությունների համար զանգահարեք Հարկային ծառայություն (Internal Revenue Service)՝ **1-800-829-3676** անվճար հեռախոսահամարով:

Ձեր ընտանիքի արտոնությունները

Երբ սկսեք Սոցիալական ապահովության կենսաթոշակային կամ հաշմանդամության արտոնություններ ստանալ, Ձեր ընտանիքի մյուս անդամները ևս կարող են վճարների իրավունակություն ձեռքբերել: Օրինակ, արտոնություններ կարող են վճարվել Ձեր ամուսնուն կամ կնոջը.

- եթե նա 62 տարեկան է, կամ ավելի մեծ; կամ
- ցանկացած տարիքում, եթե նա խնամում է Ձեր երեխային (երեխան պետք է լինի 16 տարեկանից ավելի երիտասարդ, կամ հաշմանդամ և ունենա Ձեր անվան տակ Սոցիալական ապահովության արտոնություններ ստանալու իրավունակության):

Արտոնություններ կարող են նաև վճարվել Ձեր չամուսնացած երեխաներին, եթե նրանք.

- 18-ից ավելի երիտասարդ տարիքի են;
- 18-ից մինչև 19 տարեկան են, սակայն տարրական կամ միջնակարգ դպրոց են հաճախում, լիարժեք դասընթացի ծավալով; կամ
- 18 և ավելի բարձր տարիքի են ու ծանր հաշմանդամ (հաշմանդամությունը պետք է վրա հասած լինի նախքան 22 տարեկան դառնալը):

Եթե Դուք երեխայի (ընդ որում՝ որդեգրված երեխայի) ծնող եք դառնում ավելի ուշ, քան սկսում եք ստանալ Ձեր արտոնությունները, ապա տեղյակ պահեք մեզ երեխայի մասին, որպեսզի կարողանանք որոշել՝ արդյո՞ք երեխան արտոնությունների իրավունակություն ունի:

Ի՞նչ գումար կարող է ստանալ ընտանիքի անդամը

Ընտանիքի յուրաքանչյուր անդամ կարող է ունենալ Ձեր կենսաթոշակային կամ հաշմանդամության արտոնությունների՝ ընդհուպ մինչև կեսի չափով ամսական արտոնությունների իրավունակություն: Այսուհանդերձ, այն ընդհանուր գումարի արժեքը, որը կարող է վճարվել Ձեզ ու Ձեր ընտանիքի անդամներին, սահմանափակման ենթակա է: Այդ սահմանափակումը դեպքից դեպք տարբեր է, սակայն ընդհանրապես հավասար է Ձեր կենսաթոշակային կամ հաշմանդամության արտոնության 150-180 տոկոսին:

Եթե ամուսնալուծված եք

Եթե ամուսնալուծված եք, ապա Ձեր նախկին կինը/ամուսինը կարող է ունենալ Ձեր վաստակած եկամտի հաշվով արտոնություններ ստանալու որակավորում: Որոշ իրավիճակներում նա կարող է արտոնություններ ստանալ, նույնիսկ եթե Դուք չեք ստանում: Որակավորման համար ամուսնալուծված ամուսինը/կինը պետք է.

- Ձեզ հետ ամուսնության մեջ եղած լինի առնվազն 10 տարի;
- ամուսնալուծված լինի առնվազն երկու տարի;
- լինի առնվազն 62 տարեկան;
- լինի չամուսնացած; և
- չունենա իր կամ որևէ այլ մեկի աշխատանքի հիման վրա հասանելիք հավասար կամ ավելի բարձր արտոնության իրավունակություն:

Ժառանգների արտոնությունները

Ձեր մահվան դեպքում Ձեր ընտանիքը կարող է ունենալ Ձեր աշխատանքի հիման վրա հասանելիք արտոնությունների իրավունակություն:

Ընտանիքի անդամները, որոնք կարող են արտոնություններ ստանալ, ներառում են այրուն կամ ամուրուն, որը.

- 60 կամ ավելի մեծ տարիքի է; կամ
- 50 կամ ավելի մեծ տարիքի է ու հաշմանդամ; կամ
- ցանկացած տարիքի է, եթե նա խնամում է Ձեր՝ 16-ից ավելի երիտասարդ տարիքի երեխային, որին Ձեր հաշվին Սոցիալական ապահովության արտոնություններ են հասնում:

Ձեր երեխաները ևս կարող են արտոնություններ ստանալ, եթե ամուսնացած չեն, և.

- 18-ից ավելի երիտասարդ տարիքի են; կամ
- 18-ից 19 տարեկան են, սակայն տարրական կամ միջնակարգ դպրոց են հաճախում դասընթացի լիարժեք ծավալով; կամ
- 18 և ավելի բարձր տարիքի են և ծանր հաշմանդամ (հաշմանդամությունը պետք է վրա հասած լինի նախքան 22 տարեկան դառնալը):

Ի հավելումն, Ձեր ծնողները ևս կարող են Ձեր վաստակած եկամտի հաշվին արտոնություններ ստանալ, եթե նրանց խնամքի առնվազն կեսն իրականացվում է Ձեր խնամատարությամբ:

Հետմահու վճարումները

Եթե Դուք բավարար քանակությամբ կրեդիտ ունեք, ապա Ձեր մահվանից հետո միանգամյա $255-ի վճար կարվի: Այս արտոնությունը կարող է վճարվել Ձեր ամուսնուն/կնոջը կամ անչափահաս երեխաներին, եթե նրանք համապատասխանում են որոշակի չափանիշների:

Եթե ամուսնալուծված եք

Եթե ամուսնալուծված եք, Ձեր նախկին կինը/ամուսինը կարող է Ձեր մահվանից հետո ունենալ ժառանգի արտոնությունների իրավունակություն՝ Ձեր վաստակած եկամուտների հաշվին: Նա պետք է.

- լինի առնվազն 60 տարեկան (կամ 50, եթե հաշմանդամ է) և Ձեզ հետ ամուսնացած եղած լինի առնվազն 10 տարի; կամ

- լինի ցանկացած տարիքի, եթե երեխա է խնամում, որը Ձեր վաստակած եկամուտների հաշվին արտոնությունների իրավունակություն ունի; և
- իր սեփական աշխատանքից բխող հավասար, կամ ավելի բարձր արտոնությունների իրավունակություն չունենա; և
- տվյալ պահին ամուսնացած չլինի, բացառությամբ, եթե ամուսնությունը տեղի է ունեցել 60 տարեկան դառնալուց հետո, կամ 50, եթե հաշմանդամ է:

Նախկին ամուսնուն/կնոջը վճարվող արտոնությունները չեն անդրադառնա այն ժառանգների արտոնությունների դրույքների վրա, ովքեր Ձեր վաստակած եկամուտների հաշվին արտոնություններ են ստանում:

Ծանոթություն. Եթե դուք մահանաք, և Ձեր նախկին կինը/ամուսինն ամուսնանա 60-ից ավելի բարձր տարիքում, նա կարող է Սոցիալական ապահովության արտոնությունների իրավունակություն ունենալ թե՛ Ձեր, և թե՛ նրա նոր ամուսնու/կնոջ աշխատանքի հաշվին, որը որ ավելի բարձր լինի:

Որքա՞ն կստանան ժառանգները

Ձեր ժառանգները կստանան Ձեր հիմնական Սոցիալական ապահովության արտոնության որոշ տոկոսը. Սովորաբար, յուրաքանչյուրը 75-100 տոկոսի սահմաններում: Այսուհանդերձ, ընտանիքին վճարվող ամսական գումարը ենթակա է սահմանափակման: Սահմանափակումը տարբեր չափերի կարող է լինել, ակայն ընդհանրապես հավասար է Ձեր արտոնության դրույքի 150-180 տոկոսին:

Երբ պատրաստ լինեք դիմել արտոնությունների

Արտոնությունների համար պետք է դիմել արտոնությունները սկսելու՝ Ձեր նախընտրելի ամսաթվից երեք ամիս առաջ: Եթե լիարժեքորեն պատրաստ չեք կենսաթոշակի անցնել, սակայն մտածում եք մոտ ապագայում այդ անելու մասին, կարող եք այցելել Սոցիալական ապահովության կայքէջ՝ ***www.socialsecurity.gov/retire***, և օգտվել կենսաթոշակային պլանավորման՝ մեր հարմարավետ ու տեղեկատվությամբ հարուստ ռեսուրսից: Հաշմանդամության կամ ժառանգի արտոնությունների դիմում ներկայացնելու համար պետք է դիմել իրավունակությունը վրա հասնելուն պես:

Արտոնությունների համար կարող եք դիմել մեր կայքէջից՝ ***www.socialsecurity.gov/applyforbenefits***:

Այցելելով ***www.socialsecurity.gov/estimator***՝ Դուք կարող եք նաև ստանալ Ձեր Սոցիալական ապահովության իրական եկամուտների հիման վրա գնահատված արտոնությունների նախահաշվարկ: Կարող եք նաև արտոնությունների ավելի մանրամասն հաշվարկներ ստանալ ***www.socialsecurity.gov/planners*** ում:

Երբ պետք է դիմել

Երբ արտոնությունների դիմեք, մենք Ձեզնից որոշ փաստաթղթեր կխնդրենք: Ինչ փաստաթուղթ՝ կախված է այն բանից, թե ինչ արտոնության եք դիմում: Այդ փաստաթղթերը մեզ սեղմ ժամկետում ներկայացնելը կօգնի Ձեր վճարումներն ավելի արագ անել: Պետք է ներկայացնել փաստաթղթերի բնօրինակները, կամ դրանք տրամադրող գրասենյակի կողմից վավերացված պատճենները. մենք լուսապատճեն ընդունել չենք կարող:

Դիմումը մի՛ հետաձգեք պարզապես, որովհետև բոլոր հարկ եղած փաստաթղթերը չունեք: Մենք Ձեզ կօգնենք ստանալ դրանք:

Ստորև ներկայացնում ենք այն փաստաթղթերի ոչ սպառիչ ցանկը, որոնց կարիքը կարող եք ունենալ Սոցիալական ապահովության դիմելիս.

- Ձեր Սոցիալական ապահովության քարտը (կամ համարի գրանցման փաստաթուղթը);
- Ձեր ծննդյան վկայականը;
- Ձեր երեխաների ծննդյան վկայականներն ու Սոցիալական ապահովության համարները (եթե դիմում եք նրանց համար ևս);
- ԱՄՆ քաղաքացիության կամ օրինական ներգաղթային կարգավիճակի ապացույց, եթե Դուք (կամ Ձեր երեխան) Միացյալ Նահանգներում չեք ծնվել;
- Ձեր կնոջ/ամուսնու ծննդյան վկայականն ու Սոցիալական ապահովության համարը, եթե նա դիմում է արտոնությունների՝ Ձեր եկամտի հիման վրա;
- Ամուսնության վկայականը (եթե դիմում եք Ձեր ամուսնու/կնոջ եկամտի հիման վրա, կամ եթե Ձեր ամուսինը/կինը դիմում է Ձեր եկամտի հիման վրա);

- Ձեր զորացրման փաստաթղթերը, եթե զինվորական ծառայություն եք անցել; և
- Ձեր ամենավերջին W-2-ը, կամ հարկային հայտարարագիրը, եթե ինքնուրույն աշխատանքային գործունեությամբ եք զբաղվում:

Դիմելիս մենք Ձեզ տեղյակ կպահենք՝ արդյոք անհրաժեշտ է այլ փաստաթղթեր ևս ներկայացնել:

Ինչպես ենք վճարում արտոնությունները

Ձեր Սոցիալական ապահովության վճարումները Դուք պետք է ստանաք էլեկտրոնային կերպով: Դրա տարբերակներից մեկն ուղիղ դեպոզիտն է: Ուղիղ դեպոզիտը Ձեր վճարումները ստանալու պարզ, ապահով և անվտանգ տարբերակ է: Դիմելիս անպայման ձեռքի տակ ունեցեք Ձեր չեքի գրքույկը կամ բանկային հաշվի հայտարարագիրը: Այդ տեղեկատվությունը մեզ անհրաժեշտ է: Անհրաժեշտ է նաև ունենալ Ձեր ֆինանսական հաստատության բանկային կոդը (routing number), որպեսզի Ձեր արտոնության ամսավճարն ուղարկվի ճիշտ հաշվեհամարին:

Եթե ֆինանսական որևէ հաստատությունում հաշիվ չունեք, կամ գերադասում եք Ձեր արտոնավճարները ստանալ կանխավճարված դեբիտային քարտի վրա, ապա կարող եք գրանցվել Direct Express® քարտային ծրագրում: Direct Express®-ով վճարումն ուղղակիորեն կատարվում է քարտի հաշվեհամարին: Վճարման մեկ այլ տարբերակ ևս, որ կարող եք նկատի ունենալ, էլեկտրոնային փոխանցման հաշիվն է (Electronic Transfer Account): Այս ոչ-սուղ, դաշնային կառավարության կողմից ապահովագրված հաշիվը թույլ է տալիս Ձեզ օգտվել ապահով, անվտանգ ու հարմարավետ ավտոմատ վճարումներից:

Լրացուցիչ ապահովության եկամուտը (SSI) ծրագիր

Եթե Սոցիալական ապահովության արտոնություններ եք ստանում, սակայն սահմանափակ եկամուտ ու ռեսուրսներ (Ձեր ունեցվածքը) ունեք, SSI-ը կարող է օգնել Ձեզ: SSI-ը ֆինանսավորվում է ոչ թե Սոցիալական ապահովության հարկերի, այլ ընդհանուր հարկային աղբյուրների հաշվին:

SSI-ն ամսական վճարումներ է տրամադրում 65 և ավելի ավագ տարիքի կույր կամ հաշմանդամ անձանց: SSI-ի համար Ձեր իրավունակությունը որոշելիս մենք Ձեր եկամտի և

ունեցվածքի ոչ ամբողջ ծավալն ենք նկատի առնում: Ձեր տունը կամ մեքենան, օրինակ, սովորաբար իբրև ռեսուրս հաշվի չեն առնվում:

SSI-ի մասին հավելյալ տեղեկատվության, կամ դրան դիմելու համար զանգահարեք մեզ:

Բողոքարկման իրավունքը

Եթե Ձեր հայցի կապակցությամբ մեր որոշման հետ համաձայն չեք, ապա կարող եք բողոքարկել այն: Ձեր տրամադրության տակ եղած քայլերի մասին տեղեկատվության համար տեսեք «*Բողոքարկման Ընթացքը*», Հրապարակում հ. 05-10041-AM:

Ձեր բողոքարկման գործընթացի վարույթը կարող եք իրականացնել ինքներդ՝ Սոցիալական ապահովության անվճար օգնությամբ, կամ կարող եք դիմել որևէ ներկայացուցչի օգնությանը: Մենք կարող ենք Ձեզ տեղեկատվություն տրամադրել այն կազմակերպությունների մասին, որոնք Ձեզ կարող են օգնել՝ ներկայացուցիչ գտնել: Ներկայացուցիչ ընտրելու վերաբերյալ տհավելյալ տեղեկատվության համար տեսեք «*Ներկայացուցիչ Ունենալու Ձեր Իրավունքը*», Հրապարակում հ. 05-10075-AM:

Medicare

Medicare-ը մեր երկրի հիմնական առողջապահական ապահովագրության ծրագիրն է 65 տարեկան և ավելի տարեց անձանց ու բազմաթիվ հաշմանդամ անձանց համար:

Medicare-ը չպետք է շփոթել Medicaid-ի հետ: Medicaid-ը ցածր եկամուտ և սահմանափակ ռեսուրսներ ունեցող անձանց համար նախատեսված առողջապահական ծրագիր է: Այն սովորաբար իրականացվում է նահանգային սոցիալական պաշտպանվածության կամ սոցիալական ծառայությունների գործակալությունների կողմից: Ոմանք բավարարում են կամ մեկ, կամ մյուս ծրագրի պահանջները, մինդեռ կան նաև անձինք, ում իրավիճակը համապատասխանում է թե՛ Medicare-ի, և թե՛ Medicaid-ի պահանջներին:

Medicare-ը չորս մասից է բաղկացած

- Հոսպիտալային ապահովագրությունը (Part A) օգնում է վճարել ստացիոնար հոսպիտալային խնամքի և որոշակի հետստացիոնար ծառայությունների համար:
- Բժշկական ապահովագրությունը (Part B) օգնում է վճարել բժիշկների ծառայությունների, ամբուլատոր հոսպիտալային խնամքի և այլ բժշկական ծառայությունների համար:
- Medicare Advantage պլանները (Part C) առաջարկվում են բազմաթիվ տարածաշրջաններում: Medicare-ի Part A և Part B ունեցող անձինք ցանկության դեպքում կարող են իրենց առողջապահական բոլոր ծառայությունները ստանալ Part C-ի ներքո որևէ մատակարար կազմակերպությունից:
- Դեղատոմսով տրվող դեղորայքի ծածկույթը (Part D) օգնում է վճարել բուժման նպատակով բժիշկների նշանակած դեղորայքի համար:

Ո՞վ ունի հոսպիտալային ապահովագրության (Part A) իրավունակություն

Մարդկանց մեծամասնությունը հոսպիտալային ապահովագրություն է ձեռք բերում 65 տարեկանը լրանալուն պես: Դուք դրա ավտոմատ որակավորում եք ձեռքբերում, եթե ունեք Սոցիալական ապահովության կամ երկաթուղային ոլորտի աշխատողի կենսաթոշակային արտոնությունների իրավունակություն: Կամ՝ Դուք կարող եք դրա որակավորում ձեռքբերել նաև Ձեր կնոջ/ամուսնու (ներառյալ ամուսնալուծված) աշխատանքի հիման վրա: Ոմանք էլ կարող են որակավորում ձեռքբերել, որովհետև պետական ծառայողներ են, որոնք Սոցիալական ապահովության ծածկույթ չունեն, սակայն Medicare-ի հարկ են վճարում:

Եթե Դուք Սոցիալական ապահովության հաշմանդամության արտոնություններ ստանաք 24 ամիս շարունակ, ապա ձեռք կբերեք հոսպիտալային ապահովագրության որակավորում:

Եթե Դուք Սոցիալական ապահովության հաշմանդամության արտոնություններ եք ստանում, որովհետև ամիոտրոֆիկ կողմնային սկլերոզ (Լու Գերիգի հիվանդություն) ունեք, ապա կարիք չունեք 24 ամիս սպասելու, որպեսզի որակավորում ձեռքբերեք:

Նաև, մշտական երիկամային անբավարարություն ունեցող անձինք, ովքեր տևական դիալիզի կամ երիկամի փոխպատվաստման կարիք ունեն, ունեն նաև հոսպիտալային ապահովագրության որակավորում, եթե նրանք բավականաչափ երկար են աշխատել, կամ որակավորում ունեցող աշխատողի ամուսինը/կինը կամ երեխան են:

Եթե Դուք չեք համապատասխանում այս պահանջներին, ապա կարող եք նաև փորձել Medicare-ի հոսպիտալային ապահովագրություն ստանալ ամսական անդամավճար մուծելով: Հավելյալ տեղեկությունների համար զանգահարեք մեր անվճար հեռախոսահամարով, կամ այցելեք մեր կայքէջը:

Ով կարող է ստանալ բժշկական ապահովագրություն (Part B)

Հոսպիտալային ապահովագրության իրավունակություն ունեցող գրեթե յուրաքանչյուր անձ կարող է գրանցվել բժշկական ապահովագրության համար: Part B-ն կամավոր ծրագիր է: Այն անվճար չէ: 2012 թվականին ստանդարտ ամսավճարը$99.90 է: Ոմանք, ովքեր ավելի բարձր եկամուտ ունեն, ավելի բարձր ամսավճար են մուծում:

Ով կարող է Medicare Advantage ծրագրեր (Part C) ստանալ

Յուրաքանչյուր ոք, ով Medicare-ի հոսպիտալային ապահովագրություն (Part A) և բժշկական ապահովագրություն (Part B) ունի, կարող է Medicare Advantage պլան ձեռքբերել: Medicare Advantage պլանները ներառում են.

- Medicare-ի կառավարվող խնամքի պլանները;
- Medicare-ի նախընտրելի մատակարար կազմակերպության (Preferred Provider Organization, PPO) պլանները;
- Medicare-ի մասնավոր վճարովի ծառայությունների պլանները; և
- Medicare-ի մասնագիտական պլանները:

Հնարավոր է, որ Ձեզնից պահանջվի ամսավճար մուծել, քանի որ Medicare Advantage պլանը հավելյալ արտոնություններ է առաջարկում:

Ով կարող է Medicare-ի դեղատոմսով տրվող դեղորայքի ծածկույթ (Part D) ստանալ

Յուրաքանչյուր ոք, ով Medicare-ի հոսպիտալային ապահովագրություն (Part A), կամ բժշկական ապահովագրություն (Part B), կամ Medicare Advantage պլան (Part C) ունի, ունի նաև դեղատոմսով տրվող դեղորայքի ծածկույթի (Part D) իրավունակություն: Դեղատոմսով տրվող դեղորայքի ապահովագրությունը կամավոր է, և ծածկույթի համար Դուք հավելյալ ամսավճար եք մուծում: Ոմանք, ովքեր ավելի բարձր եկամուտ ունեն, ավելի բարձր ամսավճար են մուծում:

Հավելյալ տեղեկությունների համար տեսեք *Medicare*, Հրապարակում հ. 05-10043-AM):

Օգնություն ցածր եկամուտ ունեցող անձանց՝ Medicare-ի հետ կապված ծախսերի նպատակով

Եթե ցածր եկամուտ և համեստ ռեսուրսներ ունեք, ապա Ձեր նահանգը կարող է վճարել Medicare-ի Ձեր ամսավարձը, ինչպես նաև, որոշ դեպքերում, Ձեր «սեփական գրպանից վճարելիք» այլ բժշկական ծախսեր, օրինակ՝ ապահովագրական պահումները (deductable) կամ ապահովագրական համավճարը (coinsurance):

Միայն Ձեր նահանգը կարող է որոշել՝ արդյոք Դուք այս ծրագրի ներքո օգնության որակավորում ունեք, թե՞ ոչ: Եթե կարծում եք, որ ունեք որակավորում, ապա դիմեք Ձեր նահանգային կամ տեղական բժշկական օժանդակության (Medicaid-ի) գործակալությանը, սոցիալական ծառայություններին, կամ Սոցիալական ապահովության գրասենյակին:

«Extra help (Հավելյալ օգնություն)» Medicare-ի դեղատոմսով տրվող դեղորայքի հարցում

Եթե Դուք սահմանափակ եկամուտ ու ռեսուրսներ ունեք, ապա կարող եք նաև ունենալ Medicare-ի Part D-ի ներքո դեղատոմսով տրվող դեղորայքի վճարման հարցում հավելյալ օգնության որակավորում: Սոցիալական ապահովության դերն է՝ օգնել Ձեզ հասկանալ, թե ինչպես որակավորում ձեռքբերել և հավելյալ օգնության դիմում ներկայացնել: Տեսնելու համար՝ արդյոք դիմելու որակավորում ունեք, թե՞ ոչ, զանգահարեք Սոցիալական ապահովության անվճար հեռախոսահամարով, կամ այցելեք մեր կայքէջը:

Որոշ փաստեր Սոցիալական ապահովության վերաբերյալ

2012 թ. Սոցիալական ապահովության հարկերը

- Դուք վճարում եք 4.2 տոկոս, իսկ Ձեր գործատուն՝ 6.2
- Եթե ինքնուրույն աշխատանքային գործունեությամբ եք զբաղվում, ապա վճարում եք 10.4 տոկոս
- Եկամտի՝ $110,100-ից բարձր գումարի համար Սոցիալական ապահովության հարկեր չեն մուծվում

2012 թ. Medicare-ի հարկերը

- Դուք ու Ձեր գործատուն վճարում եք 1.45-ական տոկոս
- Եթե ինքնուրույն աշխատանքային գործունեությամբ եք զբաղվում, ապա վճարում եք 2.9 տոկոս
- Medicare-ի հարկերը վճարվում են եկամտի ողջ ծավալից; որևէ առաստաղ չկա

2012 թ. աշխատանքային կրեդիտները

- Ձեր աշխատած յուրաքանչյուր $1,130-ի դիմաց ստանում եք Սոցիալական ապահովության մեկ «կրեդիտ», տարին առավելագույնը չորսը
- Կենսաթոշակային արտոնությունների իրավունակություն ձեռքբերելու համար մարդկանց մեծամասնությունը 40 կրեդիտի կարիք ունի
- Ավելի երիտասարդներն ավելի սակավ քանակության կրեդիտի կարիք ունեն, որպեսզի հաշմանդամության արտոնությունների որակավորում ձեռքբերեն, կամ որպեսզի նրանց ընտանիքի անդամները ստանան ժառանգի արտոնությունների իրավունակություն

2012 թ. Սոցիալական ապահովության արտոնությունների ամսական միջին չափը

- Կենսաթոշակառու աշխատող. $1,229
- Կենսաթոշակառու զույգ. $1,994
- Հաշմանդամ աշխատող. $1,111
- Հաշմանդամ աշխատող՝ ամուսնու/կնոջ և երեխայի հետ. $1,892
- Այրի կամ ամուրի. $1,184
- Երիտասարդ այրի կամ ամուրի երկու երեխայի հետ. $2,543

2012 թ. SSI-ի ամսավճարի դրույքները

- (չի ներառում նահանգային որևէ օժանդակ վճար)
- անձի համար՝ $698
- զույգի համար՝ $1,048

www.socialsecurity.gov

Social Security Administration
SSA Publication No. 05-10024-AM
Understanding The Benefits (Armenian)
March 2012